

Հաստատված է՝

«Ճարտարագիտության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի

գիտելոգիայի 2015թ. մարտի 10-ի նիստում:
Գլխավորություն № 01-ՈՅ/15



Սեդրակյանի կախազան, ռեկտոր՝

Գ.Շ. Գալստյան

**«Ճարտարագիտության և շինարարության Հայաստանի ազգային
համալսարան» հիմնադրամի աշխատողներին և այլ անձանց խրախուսման**

I. Ընդհանուր դրույթներ

1. «Ճարտարագիտության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) աշխատողների խրախուսման մասին կանոնակարգը սշակված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին», «Քարճազույն և հետրոնական մասնագիտական կրթության մասին», «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունարժեքական նմուշների մասին», «Աշտուհալույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և Համալսարանի կանոնադրության հիման վրա:

2. Սույն կանոնակարգը անձանեում է համալսարանի բոլոր տարակարգերի աշխատողներին, այլ անձանց և կազմակերպությունների կողմից համալսարանի կառավարման, կրթության և գիտության զարգացման՝ հիմնադրամի կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնասիրության կազմակերպման, ուսումնական և գիտական գործընթացների բարելավմանն, ինչպես նաև համալսարանի մրցունակությանն ու ճանաչմանը նպաստելու զբոժում արդյունավետ աշխատանքով ակադոմ և քաղաքիկ ձեռքբերումների ու հաջողությունների, արժեքավոր ստաջարկությունների ու նախաձեռնությունների, գիտական նարևագործությունների

(այսուհետ՝ արդյունավետ աշխատանք) համար խրախուսման, այդ թվում համալսարանին մատուցած բացառիկ ծառայությունների և ներդրումների համար պարգևներով պարգևատրման և պատվավոր կոչումների շնորհման պայմանները և կարգը:

3. Խրախուսման նպատակը համալսարանի գործունեության արդյունավետության, նպատակների ու խնդիրների իրականացման, կրթության և գիտության զարգացման, համալսարանի հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերով և տարբեր ձևերով ուսուցման, գիտական ու հետազոտական աշխատանքների արդյունավետության ապահովումն է, համալսարանին մատուցված ծառայությունների գնահատումը:

4. Խրախուսանքը սահմանվում է համալսարանի բոլոր տարակարգերի աշխատողների, ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաև ֆինանսական մարմինների ու իրավաբանական անձանց, կոլեկտիվների, այլ կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) և ֆիզիկական անձանց համար:

II. Խրախուսման պայմանները և կարգը

5. Սույն կանոնակարգի իմաստով խրախուսանքն աշխատողների արդյունավետ աշխատանքը խրախուսելու միջոց է՝ հասարակական գործուն աշխատանքի, գիտության և կրթության զարգացման գործում համալսարանի աշխատողների կողմից ակնառու և բացառիկ ձեռքբերումների ու հաջողությունների, աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու և համալսարանին մատուցած բացառիկ ծառայությունների համար պարգևատրումն է:

6. Համալսարանում կիրառվում է խրախուսանքի հետևյալ տեսակները.

- 1) Համալսարանի մեդալներով պարգևատրում.
- 2) Համալսարանի պատվավոր դոկտորի կոչման շնորհում.
- 3) Համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչման շնորհում.
- 4) Համալսարանի վաստակավոր պրոֆեսորի կոչման շնորհում.
- 5) Համալսարանի վաստակավոր գիտաաշխատողի կոչման շնորհում.
- 6) Շնորհակալության հայտարարում.

- 7) Մրցանակների հանձնում.
- 8) Միանվագ դրամական պարզևատրում.
- 9) Հուշանվերով պարզևատրում.
- 10) Լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.
- 11) Կարգապահական տույժի հանում:

7. Համալսարանի ուսանողներին կարող է տրվել մրցանակներ և կրթաթոշակ:

8. Խրախուսանքը սահմանվում է այն աշխատողների և այն անձանց ու կազմակերպությունների համար, որոնք իրենց արդյունավետ աշխատանքով նպաստում են համալսարանի կառավարման, կրթության և գիտության զարգացման գործընթացներին, համալսարանին մատուցում բացառիկ ծառայություններ:

9. Համալսարանի կառավարման գործընթացներն են.

Համալսարանի բնականոն գործունեության, կառավարման մոդելի, հոգաբարձուների խորհրդի, ռեկտորի, գիտական խորհրդի, ռեկտորատի, աշխատակազմի, կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատանքների ու գործընթացների բարելավումը, արդյունավետության ապահովումը, համալսարանի նպատակների և խնդիրների իրականացումը, բոլոր գործառույթները Հայաստանի Հանրապետության օրենսդրության, համալսարանի կանոնադրության պահանջներին համապատասխան կատարումը և միջազգային չափանիշներին համապատասխանեցումը:

10. Կրթության զարգացման գործընթացներն են՝

Կրթության զարգացման մոդելի բարելավումը, հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերով կրթության, գիտության և խորհրդատվության ինտեգրացման հիման վրա ուսուցման բովանդակության, ուսումնամեթոդական աշխատանքների կատարելագործումը, նոր և հեռանկարային մասնագիտությունների համակարգերի մշակումը և արմատավորումը, կրթական բարեփոխումները, կրթության որակի ապահովումը, ճարտարապետության և շինարարության ոլորտի համար բարձրորակ մասնագետների՝ տարբեր աստիճանների՝ բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտների ու գիտամանկավարժական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը,

11. Գիտության զարգացման գործընթացներն են.

Բնագիտական, տեխնիկական, տնտեսագիտական, հասարակագիտական և հումանիտար գիտությունների բնագավառներում հիմնարար ու կիրառական գիտահետազոտական, ինովացիոն, նախագծային ծրագրերի, փորձագիտական, խորհրդատվական, շինարարական, արտադրական, տեխնիկական հսկողության, գիտական հայտնագործությունների՝ գյուտերի և օգտակար մոդելների ստեղծման, արժեքավոր գիտական աշխատանքների, աշխատությունների, գիտական գրականության հրատարակման աշխատանքների իրականացումը, գիտական մշակումների արդյունքների ներդրումը:

12. Համալսարանի պատվավոր կոչումները շնորհելու պայմաններն են գիտության և կրթության զարգացմանն աջակցելը, համալսարանի գործունեությանը գործուն մասնակցությունը, ակնառու հաջողությունները, բացառիկ ծառայությունները, ակնառու գիտական գործունեությունը:

13. Համալսարանին մատուցված բացառիկ ծառայություններն են՝
Համալսարանի կայացմանը, միջազգային ճանաչմանը, գիտական, կրթական, հասարակական, սոցիալ-տնտեսական, արվեստի, մշակույթի զարգացմանը նպաստելը, ինժեներական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում և գիտահետազոտական, նորագույն տեխնիկայի, գույքի ձեռքբերումով, շենքային պայմանների բարելավման և նշանակալից միջոցառումների կազմակերպման նպատակով ակնառու ներդրումները:

14. Խրախուսանքը սահմանվում է համալսարանի աշխատողների արդյունավետ աշխատանքի, հայտնագործությունների, համալսարանին մատուցված բացառիկ ծառայությունների ու ներդրումների բնույթին, արդյունավետությանը և կարևորությանը համապատասխան: Խրախուսանքը սահմանվում է հետևյալ դեպքերում՝

1) Համալսարանի բոլոր տարակարգերի աշխատողներին՝ արդյունավետ գործունեությամբ, արժեքավոր առաջարկություններով և նախաձեռնություններով Համալսարանի ու Հայաստանի Հանրապետության կրթական, գիտական, հասարակական, սոցիալ-տնտեսական, ճարտարապետական արվեստի ու մշակույթի զարգացմանը, համալսարանի կառավարմանը, մրցունակությանը և միջազգային ճանաչմանը աշխատանքով նպաստելու համար.

2) Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողներին՝

ա) կրթության զարգացման գործում, կրթության որակի ապահովման, ուսուցման բովանդակության կատարելագործման, ինժեներական և գիտամանկավարժական կադրերի, ճարտարապետության և շինարարության ոլորտի համար բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստմանը, նոր մասնագիտությունների, համակարգերի մշակմանն ու արմատավորմանը, պետությունների հետ կրթական համագործակցության զարգացմանն աշխատանքով ակնառու ներդրում կատարելու համար,

բ) սովորողներին բարձրորակ տեսական, գործնական, մասնագիտական գիտելիքներ մատուցելու, գիտելիքների յուրացման, գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանը գործնական նպաստելու, առարկայական ծրագրերի մշակման, սովորողների ուսուցման, դաստիարակության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների, հասարակական գործունեության ասպարեզում ձեռք բերած նվաճումների համար,

գ) Համալսարանի ճարտարապետական ու շինարարական մասնագետներին՝ ճարտարապետության և շինարարության զարգացման գործում ակնառու աշխատանքի, համաժողովրդական ճանաչում ստացած քաղաքացիական, արդյունաբերական, տրանսպորտային, մշակութային եզակի նախագծերի և կառույցների ստեղծման համար,

3) Համալսարանի գիտական աշխատողներին՝ գիտահետազոտական նախագծային ծրագրերի իրականացման, արժեքավոր գիտական աշխատանքների, աշխատությունների, գիտական գրականության հրատարակման, հայտնագործությունների, գիտության զարգացման գործում պետությունների հետ կրթական ու գիտատեխնիկական համագործակցության զարգացմանը նպաստելու գործունեության, կատարած բարեխիղճ ու արդյունավետ աշխատանքների, արտոնագրառունակ գիտական հայտնագործության, գյուտերի և օգտակար մոդելների ստեղծման, բացահայտման ու ներդրման համար.

4) Համալսարանի վարչատնտեսական աշխատողներին՝ համալսարանի կառավարմանը, գիտության և կրթության զարգացմանը գործուն աջակցության, կանոնների, կանոնակարգերի և կարգերի նախագծերի մշակման, նյութատեխնիկական միջոցների ապահովման և խնայողության կազմակերպման, տպագրական

աշխատանքների ու համակարգչային և այլ ծառայությունների ստեղծագործական կատարման համար,

5) Համալսարանի ուսումնաօժանդակ աշխատողներին՝

ա) կրթական, գիտական, հետազոտական, ինովացիոն, նախագծային, փորձագիտական, խորհրդատվական, շինարարական, արտադրական, տեխնիկական հսկողության, կրթության որակի ապահովման աշխատանքների իրականացման արդյունավետության ապահովման, տեխնիկական և կազմակերպչական աշխատանքներին օժանդակելու, աջակցելու, գիտաժողովների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների կազմակերպման համար,

բ) Հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, մասնագիտացումների, ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման, ուսումնական, ուսումնամեթոդական գրականության հրատարակման աշխատանքներին աջակցելու համար:

15. Համալսարանի ուսանողներին՝ տարվա լավագույն դիպլոմային նախագծի, կուրսային աշխատանքի, գործուն հասարակական գործունեության, սպորտային հաջողությունների մրցումներում հաղթելու, ակադեմիական բարձր առաջադիմության համար:

16. Համալսարանի մեդալներով, պարգևներով պարգևատրվում են.

1) Համալսարանի աշխատողները, Հայաստանի Հանրապետության, արտերկրի գիտական, պետական, հասարակական և այլ գործիչներն ու կազմակերպությունները՝ արդյունավետ գործունեությամբ համալսարանի և Հայաստանի Հանրապետության գիտական, կրթական, հասարակական, սոցիալ-տնտեսական, արվեստի ու մշակույթի զարգացմանն ու միջազգային ճանաչմանը նպաստելու համար:

17. Համալսարանի շրջանավարտներին կրթության, գիտության, արվեստի, մշակույթի, սպորտի, ճարտարապետության և շինարարության բնագավառներում ակնառու վաստակի, համաժողովրդական ճանաչում ստացած քաղաքացիական, արդյունաբերական, տրանսպորտային, մշակութային եզակի կառույցների ստեղծման համար:

18. Գիտության, կրթության, արվեստի, մշակույթի, ճարտարապետության և շինարարության բնագավառների ակնավոր գործիչները և կազմակերպությունները՝ Համալսարանի կայացման և ինժեներական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում ակնառու ներդրում կատարելու համար:

19. Բարեգործները, հովանավորներն ու կազմակերպությունները՝ համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական, նորագույն տեխնիկայի, լաբորատոր սարքավորումների, լսարանային և կաբինետային գույքի ձեռքբերման, շենք-շինությունների վիճակի բարելավման, ինչպես նաև նշանակալից միջոցառումների կազմակերպման նպատակով ներդրում կատարելու համար:

20. Համալսարանին մատուցված ակնառու և բացառիկ ծառայությունների համար պատվավոր կոչումները շնորհվում են ֆիզիկական անձանց՝

1) Համալսարանի պատվավոր դոկտորի կոչումը շնորհվում է բնական և հասարակական գիտությունների, գյուտարարության, մշակույթի, կրթության, առողջապահության, հասարակական-քաղաքական բնագավառների անվանի գործիչներին՝ գիտության և կրթության զարգացմանն աջակցելու, համալսարանի գործունեությանը գործուն մասնակցության համար, Համալսարանի շրջանավարտներին՝ ճարտարապետության և շինարարության բնագավառում ակնառու հաջողությունների համար, Համալսարանի սովորողների ուսուցման, դաստիարակության գործում ձեռքբերված ակնառու հաջողությունների և նշանակալի ավանդի համար.

2) Համալսարանի վաստակավոր պրոֆեսորի կոչումը շնորհվում է համալսարանի ամբիոնների պրոֆեսորներին՝ Համալսարանում 10 տարվա արդյունավետ ուսումնագիտական գործունեություն իրականացնելու, գիտության և կրթության զարգացման գործում ակնառու հաջողությունների համար.

3) Համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչումը շնորհվում է այն անձանց, որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է պրոֆեսորներին ներկայացվող որակական չափանիշներին՝ ակնառու գիտամանկավարժական ավանդի և համալսարանին մատուցված բացառիկ ծառայությունների համար.

4) Համալսարանի վաստակավոր գիտաշխատողի կոչումը շնորհվում է համալսարանի գիտական գործունեության զարգացմանը նպաստելու, ակնառու գիտական գործունեության համար:

21. Համալսարանի պատվավոր կոչումների համար սահմանվում է երկու աստիճան՝ վաստակավոր և պատվավոր: Անձին կարող է շնորհվել մեկ պատվավոր կոչում կամ մեկ վաստակավոր կոչում: Որպես կանոն կարող է շնորհվել 2-րդ այլ կոչում, նախորդ կոչումը շնորհելուց ոչ պակաս, քան հինգ տարի հետո:

III. Աշխատանքի արդյունավետության գնահատումը

22. Համալսարանի աշխատողների աշխատանքի արդյունավետությունը, արժեքավոր առաջարկությունները, ակնառու և բացառիկ ձեռքբերումներն ու հաջողությունները, գյուտի և օգտակար մոդելի բացահայտումը գնահատվում և աշխատողը խրախուսվում է, եթե աշխատողի աշխատանքը՝

1) ավանդականի համեմատ ունի զգալի որակական տարբերություններ, առաջադեմ է և ներառում է նորույթ ու դրական արդյունք,

2) նպաստում է համալսարանի բնականոն գործունեության ապահովմանը, կառավարման գործընթացներին, մրցունակությանը և ճանաչմանը,

3) նպաստում է կրթության և գիտության զարգացմանը, ուսումնառության կազմակերպման արդյունավետությանը, կրթության որակի ապահովմանը, բարձրորակ մասնագետների պատրաստմանը, սովորողների ակադեմիական առաջադիմությանը, գիտահետազոտական աշխատանքների, նախագծային ծրագրերի և այլ աշխատանքների իրականացման գործառույթներին,

4) գյուտը և օգտակար մոդելը՝

ա) արտոնագրաունակ է և արտադրության մեջ կիրառելի,

բ) նոր է, ունի գյուտարարական մակարդակ: Գյուտը նոր է, եթե դա տեխնիկայի մակարդակի առանձին մաս չէ:

գ) գյուտն ապահովում է ցանկացած բնագավառի տեխնիկական լուծում, որը վերաբերում է արտադրանքին, մասնավորապես՝ սարքին, նյութին, կենսատեխնոլոգիական արգասիքին կամ եղանակին: Գյուտն ապահովում է նյութական միջոցների օգնությամբ նյութական օբյեկտի վրա գործողությունների իրականացման գործընթացը և օգտագործումը,

դ) օգտակար մոդելն ապահովում է նոր, ոչ ակնհայտ ու արդյունաբերորեն կիրառելի այն տեխնիկական լուծումը, որը վերաբերում է արտադրանքին, մասնավորապես՝ պիտույքներին, սարքերին, գործիքներին կամ դրանց մասերին, նյութին կամ եղանակին: Օգտակար մոդելը նոր է, եթե դա տեխնիկայի մակարդակի մաս չէ:

23. Մատուցված բացառիկ ծառայությունները և ակնառու ներդրումները գնահատվում են մատուցված ծառայությունները և ներդրումները համալսարանի գործունեության, կրթության և գիտության զարգացման գործընթացներին նպաստելու չափանիշներով:

24. Համալսարանի աշխատողների արդյունավետ աշխատանքն ու նորարարությունը ակնառու և բացառիկ ձեռքբերումներն ու հաջողությունները, գյուտի և օգտակար մոդելի բացահայտումը Համալսարանին մատուցված բացառիկ ծառայությունները և ներդրումները գնահատում է համալսարանի ռեկտորի կողմից ձևավորված մասնագետների հանձնախումբը, որը որոշում է սույն կանոնակարգի 13-րդ և 15-րդ կետերում նշված հատկանիշների առկայությունը, դրանց որակական տարբերությունն ավանդականի նկատմամբ և դրական արդյունավետությունը:

25. Մասնագետների հանձնախումբն առանձնացնում է ներկայացված յուրահատուկ լուծումներն ու քննարկման արդյունքներով որոշում արդյունավետ աշխատանքի, նորարարության ներդրման հնարավորությունը, համալսարանին մատուցված բացառիկ ծառայությունների և ներդրումների արդյունավետությունը:

ա) վերլուծվող լուծումներում առանձնացվում են բոլոր էական հատկանիշները,

բ) ընտրված լուծումներում բացահայտում են նոր հատկանիշները, որոնք նախկին լուծումների նկատմամբ ունեն առավելություններ:

գ) ըստ արտոնագրային և գիտատեխնիկական ինֆորմացիայի բացահայտում են գոյություն ունեցող բոլոր նմանակները,

դ) վերլուծում են ընտրված լուծումների հատկանիշները,

ե) ընտրում են հայտագրված լուծման ամենաարդյունավետ տարբերակը:

26. Հանձնախումբն ենթադրվող գյուտի և օգտակար մոդելի հայտագրված լուծման և ամենամոտ նմանակի համեմատական վերլուծություն անցկացնելիս կատարում է հետևյալ աշխատանքները.

ա) առանձնացնում են ամենամոտ նմանակից էական բոլոր տարբերություններն ու նման հատկանիշները,

բ) որոշում են յուրաքանչյուր տարբերիչ հատկանիշի ազդեցությունն ընդհանուր դրական արդյունքի վրա,

գ) կազմում են ենթադրվող գյուտի և օգտակար մոդելի հավակնության սահմանումը և արտոնագրաունակությունը:

27. Հանձնախմբերը խրախուսման արժանի լուծումների գնահատականը ներկայացնում են համալսարանի ռեկտորին:

IV. Արդյունավետ աշխատանքի արդյունքների, գյուտի և օգտակար մոդելի օգտագործման կարգը

28. Նորարարությունն օգտագործելու բացառիկ իրավունքը պատկանում է համալսարանին:

29. Ծառայողական պարտականությունները կամ համալսարանի առաջադրանքը կատարելու ժամանակ աշխատողի ստեղծած գյուտի և օգտակար մոդելի (ծառայողական գյուտի) արտոնագիր ստանալու իրավունքը ըստ պայմանագրի պատկանում է (տրվում է) համալսարանին:

30. Աշխատողի լրացուցիչ աշխատանքի արդյունքում ստեղծված գյուտի և օգտակար մոդելի արտոնագիր ստանալու իրավունքը պատկանում է աշխատողին: Արտոնագրով պաշտպանված գյուտը և օգտակար մոդելը օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու բացառիկ իրավունքը պատկանում է արտոնագրի տիրոջը՝ հեղինակին:

31. Նորարարությունը, գյուտը և օգտակար մոդելը կարող են ստեղծվել համալսարանի աշխատողների կողմից՝ ծառայողական պարտականությունների կատարման և գիտահետազոտական ու նախագծային ծրագրերի իրականացման ընթացքում կամ համալսարանի առաջադրանքով՝ պայմանագրային հիմունքներով կամ աշխատողի լրացուցիչ աշխատանքի արդյունքում:

32. Այն դեպքում, երբ համալսարանը հանդիսանում է արտոնագրատերը, ապա գյուտի կամ օգտակար մոդելի հեղինակներն իրավունք չունեն դրանք օգտագործել առանց համալսարանի թույլտվության:

33. Նորարարությունը, գյուտը և օգտակար մոդելը կարող են ստեղծվել մի քանի անձանց կողմից համահեղինակությամբ, այդ թվում՝ համալսարանի և աշխատողի

համահեղինակությամբ: Համահեղինակների փոխհարաբերությունները սահմանվում են նրանց համաձայնությամբ:

34. Նորույթի, գյուտի և օգտակար մոդելի ստեղծմանը ցուցաբերված ոչ ստեղծագործական բնույթի աջակցությունը (տեխնիկական կամ կազմակերպչական օգնություն, աշխատանքներին օժանդակել և այլն) չի հանգեցնում համահեղինակության:

35. Ենթադրվող գյուտի և օգտակար մոդելի հայտագրվող լուծման հեղինակները գյուտի և օգտակար մոդելի արտոնագրումը ձևակերպում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. Աշխատողներին խրախուսման կարգը

36. Համալսարանի աշխատողներին խրախուսումը կատարվում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից խրախուսման արժանի աշխատանքների, արդյունավետ աշխատանքի՝ ակնառու և բացառիկ ձեռքբերումների ու հաջողությունների, այլ անձանց և կազմակերպությունների կողմից Համալսարանին մատուցված բացառիկ ծառայությունների և ներդրումների, պատվավոր կոչում շնորհելու, նորույթի, գյուտի և օգտակար մոդելի մասին համալսարանի ռեկտորին ներկայացված առաջարկության հիման վրա: Գյուտի և օգտակար մոդելի, արժեքավոր առաջարկության և նախաձեռնության համար առաջարկությունները կարող են ներկայացնել նաև դրանց հեղինակները: Առաջարկության ձևը ըստ խրախուսանքի տեսակի սահմանված է սույն կանոնակարգի թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հավելվածներում):

37. Առաջարկությունում նշվում են աշխատողի անունը, հայրանունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, աշխատողի կառուցվածքային ստորաբաժանումը, խրախուսման արժանի աշխատանքի կամ գործողությունների, ակնառու և բացառիկ ձեռքբերումների ու հաջողությունների, նորույթի, գյուտի և օգտակար մոդելի բովանդակությունը, որոնց համար սույն կանոնակարգով սահմանված է խրախուսում:

38. Համալսարանի պարգևների և պատվավոր կոչումների ներկայացնելու համար հավակնորդներին առաջադրում են.

- 1) Համալսարանի ռեկտորը.
- 2) Համալսարանի ռեկտորատը՝ ռեկտորատի որոշմամբ.
- 3) Ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ խորհրդի որոշմամբ.
- 4) Համալսարանի ամբիոնը՝ ամբիոնի որոշմամբ.
- 5) Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումները՝ կոլեկտիվի ժողովի որոշմամբ:

39. Խրախուսանքի կարող են ներկայացվել միայն այն առաջարկությունները, նախաձեռնությունները, ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը, օգտակար մոդելները) և այն նորարարական աշխատանքները, որոնք իրագործվել են (հրատարակվել, հրապարակվել, կատարվել, կառուցվել) առաջին անգամ և կիրառելի են համալսարանի բնականոն գործունեության համար:

40. Համալսարանի աշխատողները խրախուսանքի են ներկայացվում՝

- ա) գյուտի կամ օգտակար մոդելի վերաբերյալ արտոնագիր տալուց հետո արտոնագրի հեղինակին (հեղինակներին),
- բ) աշխատողների արդյունավետության, նորարարության ներդրման դեպքում՝ նորարարության հեղինակին (հեղինակներին),
- գ) այն աշխատողներին, որոնք աջակցել են ընդունված նորարարության, գյուտի կամ օգտակար մոդելի մշակմանն ու տեխնիկական լուծմանը,
- դ) այն աշխատողներին, որոնք աջակցել են նորարարության, գյուտի և օգտակար մոդելի ստեղծմանը, օգտագործմանը և ներդրմանը:

41. Կարող են խրախուսվել նաև այն աշխատողները, ովքեր գործուն մասնակցություն են ունեցել նորարարության, գյուտի և օգտակար մոդելի ստեղծմանը, նյութերի, գրականության, տեղեկատվության և խորհրդատվության ապահովմանը:

42. Գիտական խորհրդի նիստում հրապարակվում է հավակնորդների կենսագրական և գործունեության վերաբերյալ տեղեկությունները:

43. Աշխատողին խրախուսանքի տեսակը, դրամական խրախուսանքի չափը որոշում է համալսարանի գիտական խորհուրդը՝ ռեկտորի առաջարկությամբ՝ բաց քվեարկությամբ նիստին մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Գիտական խորհուրդը Համալսարանի պարզևներով պարզևատրման, պատվավոր կոչում շնորհելու և աշխատողներին խրախուսելու հարցերը որոշվում է բաց

քվեարկությամբ, հավակնորդի ընտրությունը կատարվում է գիտական խորհրդի նիստին մասնակիցների ձայների դրական առնվազն 2/3-ի դեպքում: Խրախուսանքը տրվում է ռեկտորի հրամանով:

44. Համալսարանի պարգևները, ոչ դրամական խրախուսանքը հանձնում, պատվավոր կոչումները շնորհում է համալսարանի ռեկտորը:

45. Համալսարանի մեդալով պարգևատրվողին հանձնվում է սահմանված նմուշի մեդալ և վկայական՝ գրանցելով այն պարգևատրվողների գրանցամատյանում: Համալսարանի պատվավոր կոչման համար հանձնվում է շնորհագիր: Պարգևի հանձնման ու պատվավոր կոչման շնորհման արարողությունը կատարվում է համալսարանի գիտխորհրդի նիստում, ռեկտորատի նիստում կամ որևէ միջոցառման ժամանակ:

46. Դրամական պարգևատրությամբ խրախուսանքն իրականացվում է համալսարանի հաշվապահության միջոցով, աշխատավարձի վճարման կարգով:

47. Դրամական խրախուսանքը վճարվում է համալսարանի խնայողությունների և օրենքով չարգելված կարգով ձեռք բերված այլ միջոցների հաշվին:

48. Աշխատողների խրախուսումը կատարվում է եռամսյակը մեկ անգամ:

49. Խրախուսանքը սահմանվում է միայն Համալսարանում աշխատելու ժամանակաշրջանում:

VI. Անցումային դրույթներ

50. Սույն կանոնակարգով սահմանված խրախուսման միջոցները կարող են կիրառվել նաև 2014 թվականի ընթացքում համալսարանի աշխատողների կողմից ստեղծված գյուտերի և օգտակար մոդելների համար:

VII. Եզրափակիչ դրույթներ

51. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
52. Սույն կանոնակարգի ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդում ընդունվելուց և համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո հաջորդ օրվանից:
53. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ:

Գիտական ընթացակարգ
10 մարտի 2015թ.
գիտխորհրդի որոշում № 01-08/15



Լ. Չ. Լևոնյան

Հավելված № 1

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարան» հիմնադրամի դրամական
պարզևոժ պարզևատրման

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի _____
ստորաբաժանման անվանումը

Առաջարկում ենք _____
(պարզևատրման ներկայացված անձի անունը, հայրանունը,
ազգանունը)

Ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը _____

Աշխատանքի վայրը (ստորաբաժանումը), պաշտոնը և ստաժը _____

Գիտական կոչումը և աստիճանը _____

Պարզևատրման ներկայացման հիմնավորումը _____

Կից ներկայացվում է պարզևատրումը հիմնավորող նյութերը:
Առաջարկվում է պարզևատրել _____

(անունը, ազգանունը)

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային
համալսարանի _____

ներկայացնող ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը և ստորագրությունը

_____ ամսաթիվ, ամիս, տարեթիվ

Հավելված № 2

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
պատվավոր կոչում շնորհելու մասին

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի _____

(ստորաբաժանման անվանումը)

Առաջարկում ենք _____

(պատվավոր կոչման ներկայացված անձի անունը, հայրանունը,
ազգանունը)

Ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը _____

Ծննդյան վայրը _____

Մեռը _____ ազգությունը _____ քաղաքացիությունը _____

Կրթությունը _____

(երբ և որ ուսումնական հաստատությունն է ավարտել)

Երբ և ինչպիսի պարգևներով է պարգևատրվել`

Աշխատանքի վայրը և պաշտոնը _____

Կոչումը (գիտական, զինվորական և այլն) _____

Տեղեկություններ աշխատանքային գործունեության մասին _____

Ընտանեկան դրությունը _____

Հասցեն _____

Պատվավոր կոչման ներկայացնելու հիմնավորումը _____

Այլ տվյալներ _____

Շնորհել _____

(Համալսարանի պատվավոր կոչման անվանումը)

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի _____

առաջարկությունը

ներկայացնող ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը և ստորագրությունը

ամսաթիվ, ամիս, տարեթիվ

Հավելված № 3

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
պարզևո՞վ պարզևատրե՞լու մասին

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի _____

(ստորաբաժանման անվանումը)

Առաջարկում եմք _____

(պարզևատրման ներկայացված անձի անունը, հայրանունը,
ազգանունը)

Ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը _____

Ծննդյան վայրը _____

Մեռը _____ ազգությունը _____ քաղաքացիությունը _____

Կրթությունը _____

(եթբ և որ ուսումնական հաստատությունն է ավարտել)

Երբ և ինչպիսի պարզևներով է պարզևատրվել՝ _____

Աշխատանքի վայրը և պաշտոնը _____

Կոչումը (գիտական, զինվորական և այլն) _____

Տեղեկություններ աշխատանքային գործունեության մասին _____

Ընտանեկան դրությունը _____

Հասցեն _____

Պարզևատրման ներկայացման հիմնավորումը _____

Այլ տվյալներ _____

Պարզևատրել _____

(Համալսարանի պարզևի անվանումը)

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի _____

առաջարկությունը

ներկայացնող ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը և ստորագրությունը

ամսաթիվ, ամիս, տարեթիվ

